

Վ. Լ Ե Ջ Ո Ւ.

Հայ-բոշան, որպէս բոլոր ցիգանները, ունի իր ազգային լեզուն, որ մեծ նմանութիւններ ունի բոլոր միւս ցիգանների լեզուի հետ: Այդ լեզուն ժամանակի ընթացքում աղքատացել է և գուցէ հազիւ 5—600 բառ է մնացել, որովհետեւ հայ բոշան ոչ գրականութիւն ունի և ոչ էլ բերանացի երգեր կամ աւանդութիւններ:

Եթէ ի նկատի ունենանք նաև բոշայի անհոգութիւնը իր ազգային լեզուի վերաբերութեամբ, այն ժամանակ հասկանալի կը դառնայ, թէ ինչու այդ լեզուն ոչ միայն այժմ որցրել է, աղաւաղել շատ բառեր, այլ և այն, որ նա լիովին մոռացութեան է տուել իր քերականութիւնը և ընդունել է հայկական այն բարբառներ, որի մէջ բոշան ապրում է: Բոշան երբէք հոգ չի տանում ուղղելու իր որդու արտասանած բառը, եթէ նա կրճատում է կամ աղաւաղում: Այդպէս, հետզհետէ կորցրել է նա շատ բառեր, կորցրել քերականութիւնը, յաճախ էլ փոխ առել շրջապատող ազգերից բառեր ու նրանց աղճատել իր բերնի մէջ: Բոշայական բուն լեզուն քիչ բառ ունի, և եղածի կէսը կամ հայերէն բառերից աղճատուած է և կամ միջանի արմատական բառերից անտաշ կերպով թխած ու կազմած: Այժմեան բոշայի խօսակցութեան մէջ մուտք են գործել նաև բառեր այն գաղտնի բարբառներից, որոնք ունին Թիւրքա-Հայաստանում եղած զանազան արհեստավորները: Բոշան իր լեզուն էլ համարում է «հնարած» մի լեզու, մի ժարգօն *): Այդպիսի «հնա-

*) Ն. Վ. Սարգսեան «Տեղեկագիր 'ի փոքր և 'ի մեծ Հայտ» գրքի մէջ վկայում է նորինը:

րած» լեզուներ ունին նայն իսկ Կովկասի միքանի քաղաքների տրհեստաւորները իրենց մէջ: Ալէքսանդրապօլում և Էրզրումում օրինակ, կլայեկչիները, հացթուխները, աշղները և այլն ունին իրենց սեփական «հնարովի» լեզուն, որոնք կամ սիմբօլական և պատկերական են և կամ ուղղակի հայերէն բառեր, միայն վանկերը ետ ու առաջ դրած և այլն և այլն:

Բայց բոշաների լեզուն նման չէ երբէք այդ հնարած լեզուներին: Նա հնկա-արիական լեզուի մի ճիւղ է, հաւանականօրէն նրա ստորին բարբառներից մէկը, որ անցնելով Պարսկաստանից, Եգիպտոսից ու Միջագետքից, շատ ենթարկուել է այդ երկրների լեզուների ազդեցութեանը: Պարսկերէնի ազդեցութիւնը ակներև է, իսկ նմանութիւնը եւրոպական գնչուների լեզուին՝ շատ աչքի խփող: Պրօֆ. Պատկանեանը, որ համեմատութիւններ է արել հայ բոշաների լեզուն բոլոր միւս գնչուների լեզուի հետ, իրաւացի կերպով եզրակացնում է, թէ «Բոշայի լեզուն ցիգանական մի բարբառ է, որի կէսը լատուկ է իրենց ցեղի և միւս կէսը նման եւրոպական գնչուների լեզուին» (ПАТКАНОВЪ «Цыганы»). բոլոր այն հեղինակները — Պասպատի, Կօլօկչի, Գուլիտօ-Կորա, Ն. վ. Սարգսեանը — որոնք խօսել են հայ-բոշայի լեզուի մասին, միահամուռ պնդում են, որ այդ լեզուն հնդկա-արիական լեզուի ստորին բարբառներից մէկն է, զգալի կերպով ենթարկուած պարսկերէնի և հայերէնի ազդեցութեանը: Իբր օրինակ ես կը բերեմ այստեղ նախ միքանի բառեր՝ ցոյց տալու համար պարսկերէնի հետ ունեցած նրմանողութիւնը: — Ալ — մէկ (պրս. եք), ըանդել — կապել (պրս. բէնդէն), ըարըար — գէմ առ գէմ (պրս. բարաբար), ըարն — ունենալ (պրս. դարէն), խարի — էշ (պրս. խէր), լէհ — գիւղ (պրս. դէհ), լուի *) — երկու (պրս. դու), բարն — գործել (պրս. քար քէրդէն) և այլն:

*) Նկատելի է մի բան, որ եւրոպական ցիգանների ր տառապարտիկ ցիգանները արտասանում են դ, իսկ հայ-բոշաները՝ լ: Հայ-բոշաները շատ անդամ էլ եւրոպ. ցիգանների դ տառը լի են դար-

Միքանի բառեր էլ իբր օրինակ՝ որ հայ-բոշաների լեզուն շատ նման է միևս կողմերի, մանավանդ եգիպտական ցիգանների լեզուին:

Հայ բոշ. եգիպ. զնչու.

Անլու	— ձու	— anro (նոյնպէս Եւր. գնչ.)
ահքօր	— խնձոր	— akhor, akor (նոյնպէս Եւր. գնչ.)
լօմ	— գնչու	— qom, rom (բոլոր գնչուների)
չուրի	— դահակ	— zurhi (նաև ռուսական գնչուների)
արաւ	— ալիւր	— aro
լանկ	— քիթ	— nak (նոյնպէս Եւր. գնչ.)
լէվալ	— Աստուած	— qetleva (նոյնպէս և Եւրոպ. ցիգան.)
փալ	— եղբայր	— pral, pal (նոյնպէս Եւր. գնչ.)
քելել	— պարել	— khelava
պանի	— ջուր	— pani (բոլոր ցիգանները)
կուլաւ	— դող	— zur (չուլաւա—գողանալ)
մանուս	— մարդ	— manush (բոլոր ցիգանները)
մուս	— էրիկ	— murash (անգլ. ցիգ. marash)
նասուել	— փախչել	— nasawel
նկալել	— մերկանալ	— nangalo
նա կամ մա	— ոչ	— na, ma (բոլոր գնչ.) և այլն:

Հայ-բոշաների լեզուի մասին այստեղ ես աւելի կանգ չեմ առնելու, որովհետև գործիս վերջում տալու եմ 3—400 բառերից մի բառարան և որովհետև այդ լեզուի մասին համեմատական օրինակներով հետազօտութիւններ արուած կան պրօֆ. Պատկանեանի «Цыганы» գրքի մէջ շատ աւելի մանրամասն *):

Միայն ես այսքան կը կրկնեմ, որ հայ-բոշայի լեզուն լիովին կորցրել է իր ֆլէկցիան (flexion) և ստացել է հայկականը: Բայերի խոնարհման, բառերի հոլովումները նա

ձնում, օրինակ Եւրոպ. ցիգանների դէվալ (Աստուած) հայ-բոշաները արտասանում են լէվալ, րօմը (ցիգան) հայ-բոշաները՝ լօմ և այլն:

*) Համեմատել Josef Jesina-ի «Romani eib oder die Zigeunersprache» քերականութեան և բառարանի հետ:

անում է հայերէնով. ոչ մի նշոյլ չէ մնացել իր բուն քերականութեան ձեերի:

Բացի դրանից, այդ լեզուն վերին աստիճանի աղքատացած, չունի ոչ մի հոգեկան-էտիկական բառ: Ունենալով միշտ բնութեան հետ գործ, անսովորը այն է, որ լեզուն յատուկ բառեր իսկ չունի զանազան բոյսերի և կենդանիների համար: Այդ բանը նկատելի է ոչ միայն հայ-բոջաների, այլ և բոլոր միւս գնչուների լեզուի մէջ: Օրինակ, այժմ բառը կազմուած է *փոքր-ոտանի* (ջունաբ-բաւ) բառերից. *ակռաւին՝* ասում են *սել թոշուն*, *թուլթակին՝ խօսող թրոշուն*, *ծերունուն՝ մեծ մարդ* (որով մանուս), *ծովին՝ մեծ ջուր* (որով սլանի) և այլն և այլն: Անհոգութիւնը լեզուն պահպանելու և բառերն ու արտասանութիւնը չաղճատելու՝ ունին բոլոր ցիգանները և այդ է պատճառը, որ հայ-բոջայի և առհասարակ ցիգանների լեզուի բառարան կազմողները մեծ դժուարութիւնների են հանդիպում լսելով զանազան նշանակութիւններ միևնոյն բառի և միևնոյն բառի զանազան արտասանութիւններ: Օրինակ, *ճանրաւ*, *ջանրաւ*, *ջանդրաւ* — նշանակում է հարս, հարսնացու:

ճլաւ, *ջիլաւ* — շուտ.

նասուաւ, *նասուեցաւ* — հիւանդ, տկար, հիւանդացաւ.

թուլ, *թուլին* — ձիւն, հող.

լախուղ — մարդ, *այր*, *ամուսին*, *դուղացի*.

սրաւնիշ, *սրամնիշ* — հարիւր.

վգնել, *վկնել* — ծախել:

Այս նոյն զանազանութիւնը արտասանութեանց մէջ պրօֆ. Պատկանեանը գտել է ուսուցիչների մէջ շատ աւելի շեշտուած: Օր. *Եղըայր* բառը ուսուցիչները հնչում է *պրալլ*, *պըրալ*, *պղալ*. *ոսը՝* պուներու, *գիրոյ*, *հերոյ* և այլն:

Այդ բոլորից սակայն մի բան աչքի է խփում և այդ այն է, որ ցիգանական լեզուն ամէն տեղ ոչ թէ ենթարկւում է պետական լեզուի, այլ իրենց բնակավայրի բարբառի անմիջական ազդեցութեանը թէ հնչումով և թէ քերականութեամբ: Այդպէս էլ եղել է հայ-բոջաների լեզուի հետ:

Թրքահայաստանում հայ-բոշան ուրիշ հնչիւնով է խօսում, նոյն իսկ ուրիշ շեշտով, ուրիշ քերականութեամբ և Կովկասի այն կողմերում, ուր Արարատեան բարբառն է թագաւորում՝ բոլորովին ուրիշ:

Հայ-բոշաները իրենց բուն լեզուով իրենց մէջ այժմ խօսում են միայն այն ժամանակ, երբ կամենում են միմեանց գաղտնի բան հաղորդել. այլապէս նրանք վարժուել են հայերէն խօսելու և մի առանձին շեշտ են դնում հայերէն բառերը արտասանելու մէջ: Իրենց բուն լեզուի կոշտութիւնն ու չորութիւնը երևում է, երբ բոշայերէն են խօսում, իսկ հայերէնի մէջ շատ տառեր փափկացնում են. զ տառը յաճախ անհետացնում և փոխարինում յ տառի օրինակ հագնել—հայնել, Գրիգոր—Գիյօր, Գօյօր և այլն: Եւ այդ, այլ և ռ տառի շատ փափկահնչիւն անելը մի տեսակ թլուատացնում է նրանց հայերէն խօսելը: Ինձ յաճախ պատահել է լսել թուրքերի հայերէն խօսելը. բոշան իր հայերէն խօսելով բաւական յիշեցնում է թուրքի արտասանութիւնը: 2 տառը բոշան էլ թուրքի պէս զ-ի մօտ է արտասանում, իսկ կոշտ ու գրեթէ չի կարողանում հնչել և եթէ հնչում է՝ այն էլ դժուարութեամբ կամ չափազանց րաժ՝ ոռռ: Հնչիւնական այս ձևերը շատ կարելի է ստուգել երիտասարդ բոշաների բերանից, այլ և կանանցից. իսկ հասակաւոր տղամարդիկ և կանայք, որոնք երկար ապրել են և ապրում են հայերի շրջանում, որոնք անդադար շրջակայ գիւղերումն են, հնչում են բաւական ճիշտ, հայերի նման, սակայն ուշադրութեամբ լսելով, նկատում է թրքա-պարսկական շեշտը շատ բառերը հնչելիս: Խօսելիս, բոշայի ձայնը սուր է, երբեմն ճչացող և կոկորդային. ուրնգային հնչիւններ նա քիչ ունի. այն էլ միայն հայերէն խօսելիս. իսկ իրենց լեզուով՝ ն տառն անգամ այնքան ունգային չէ, որպէս հայերէնում: Գրեթէ բացակայում է իր լեզուի մէջ ա տառի է՛ (ع)-ի փոխելը, որպէս այդ անում են հայերը ենթարկուած պարսկական լեզուի ազդեցութեանը:

Քոշան երկու տեսակ ա ունի, ինչպէս սանսկրիտերէնը. ա փակուած, սեղմած և ա բաց, լայն. օրինակ սա՛ն/ծօ (ա բաց, լայն) և նա՛ (ոչ) ա փակուած, սեղմուած. չ տառը նա հըն-
չում է սանսկրիտերէնի պէս քմալին ձայնով, իսկ ճ գիրը,
որպէս մեզնում, չէ հնչում տմուր, ալ աւելի մեղմ ու
ջ-ի նման և այդ է պատճառը, որ բառարան կազմողները
շատ բառեր գրում են կամ ջ-ով կամ ծ-ով, չկարողանալով
քոշալի հնչած ծ-ին նմանեցնել: